

Մայիսյան վարժություններ 1

- 1. Լրացրե՛ք գրաբարյան նախադասությունը:

Ողջոյն հասեալ և շինութիւն «աստվածների [աստուած բառը չդնե՛ք]» օգնականութեամբ, լիութիւն պարարտութեան յարոյն [Արամազդ, հատկանվ. հոլովմամբ], իսնամակալութիւն «Անահիտ տիկնոջից [-ոջ-ով]», և քաջութիւն «հասնի [հասանեմ չք, II ապառնի]» ձեզ ի քաջէն Վահագնէ ամենայն Յայոց աշխարհիս:

▶ Ո

- 2. Թարգմանե՛ք գրաբար:

«Եվ դռնապանին պատվեր կտա, որ [զի] արթուն լինի [երկու բայն (տամ և լինիմ)՝ I ապառնի]»:

▶ և

- 3. Գրաբար թարգմանեք # մեռանիմ չեզոք բայով այս երեք նախադասությունները:

3.1. «Իսկ եթե չկամենաս [կամիմ, I ապառնի] գնալ, կմեռնես [սահմանական ներկա] իմ ձեռքերից, որպես և Մուշեղը մեռավ»:

▶ Ապա թե ոչ

3.2. «Առաջին Արշակունի թագավորները, որ գիտեին մեզ, թե ով էինք կամ որտեղից [ուստի] էինք. այլ զի դու քանզի չես Արշակունի, գնա՛ (այս) աշխարհից և մի՛ մեռիր իմ ձեռքերից»:

▶ Առաջին

3.3. «Մի կերեք նրանից և մի մոտեցեք, որ չմեռնեք [ուտեմ նք, հուպ լինիմ չք; բոլոր երեք բայերը՝ I ապառնի]:

▶ Մի

- 4. Յետևյալ բայաձևերից որո՞նք են վկայում, որ տվյալ բայի անցյալ կատարյալի հիմքը ցոյական է: Մեկնաբանե՛ք ու թարգմանե՛ք այդ բոլոր ձևերը:

անցցէ, արգելուցումք, հայեսջիք, մնացից, սպանցէ

▶ X

- 5. Գրաբարյան *ե* խոնարհման բայերի հետևյալ դիմավոր ձևերում **-ան-** ռնգայինով ածանցն ընդգծե՛ք և ներկե՛ք թավ մանուշակագույնով: Մեկնաբանե՛ք ու թարգմանե՛ք այդ բոլոր ձևերը:

անիծանիցեմ, լքան, կործանեցեր, կոչեցան, յանդիմանեցան, սպանցէ

▶ X

- 6. Պատմալեզվական վարժություններ (հուշման կարգով ասեմ, որ սրանք չորսն էլ արտացոլում են հնչյունական կամ ձևաբանական իրողություններ, որոնք արտացոլված են կամ հարևան կետերում, կամ էլ մեր նախորդ պատմալեզվական վարժություններում)

- 6.1. Յունարեն *εἴληρα* (սա չեզոք սեռի գոյական է՝ հոգնակի ուղղական հոլով)

Սրա հայկական ցեղակիցն արտացոլում է գրոյական ձայնդարձը և գրաբարում ունի մի կողմից *ռ* հոլովում, մյուս կողմից՝ *հ-ա*. Նշե՛ք այդ բառն ու վերականգնե՛ք դրա հնդեվրոպական նախաձևերը՝ եզակի ու հոգնակի: Ի՞նչ կարող էք ենթադրել հայկական բառի հոլովման բազմաձևության մասին:

▶ X

- 6.2. Յնդեվրոպական **dipr-h₂*՝գոհաբերություն՝ > հայ. X՝Y՝:

▶ X

- 6.3. Լատիներեն այս երկու բառերում արտացոլված է միևնույն հնչյունափոխությունը.

- լատ. *somnus*,

- լատ. *damnum*՝*ֆինանսական կորուստ՝ մի հանրային առիթով:

Նշե՛ք դրանց հայկական ցեղակիցները և հնդեվրոպական վերակազմությունները:

▶ X

Յրաչ Մարտիրոսյան, Յայոց լեզվի պատմություն, 2021, ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 6.4. Յուն. *ἰδρῶς* գոյականի հնդեվրոպական նախաձևը **-i-* ձայնավորից առաջ դեռ երկու հնչույթ էլ ունի: Իմաստը տեղավորվում է մարմնին առնչվող իմաստախմբում: Տվե՛ք հնդեվրոպական վերակազմությունն ու հայկական ժառանգը և բացատրե՛ք վերջինիս արտացոլած հնչյունափոխությունները: Յավելյալ հուշում. այս հնդեվրոպական բառից կա նաև «չերեզներով» նոր հայերենին հասած մի եվրոպական հագուստաբառ:

▶ X

Յրաչ Մարտիրոսյան
27.04.2021, Leiden